ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13՝՝, հեռ.՝(011) 90 00 02

№ 18-29Ա-26

«30» 01 2026թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
Ալեն Սիմոնյանին

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Համաձայն «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ձեզ եմ ներկայացնում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի՝ 2025 թվականի գործունեության մասին հաղորդումը:

Առդիր՝ **35** թերթ:

Հարգանքով՝

Արդարադատության առաջին
դասի խորհրդական **Արթուր Նահապետյան**

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

Հաղորդում 2025 թվականի գործունեության մասին

2025 թվական

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թվականի գործունեության մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 23-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), որը, որպես քննչական մարմին, կազմակերպում ու իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը և իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

Կոմիտեն իր աշխատանքները կազմակերպում և իրականացնում է՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Քրեական դատավարության օրենսգրքով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով, Կոմիտեի կանոնադրությամբ, Կոմիտեի նախագահի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերով, հուշագրերով, համաձայնագրերով և այլ իրավական ակտերով:

ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ով սահմանված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնելու և նախաքննություն կատարելու իրավասությունը2021 թվականի հոկտեմբերի 23-ից վերապահվել և իրականացվում է Կոմիտեի քննիչների կողմից:

Օրենքով վերապահված լիազորությունների իրականացման համար Կոմիտեում 2025 թվականին նախատեսված է եղել 275 հաստիք, որից 80-ը՝ ինքնավար, 120-ը՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող, 39-ը՝ քաղաքացիական ծառայության, 8-ը՝ հայեցողական պաշտոններ և 28-ը՝ տեխնիկական սպասարկում ու քաղաքացիական աշխատանք կատարող անձինք:

2025 թվականի սեպտեմբերի 3-ից քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնների թիվը կազմել է 41, իսկ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց թիվը՝ 26:

2025 թվականի ընթացքում՝ ընդհուպ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը, Կոմիտեի հաստիքներն ամբողջությամբ համալրված չեն եղել, ինչն իր էական ազդեցությունն է ունեցել աշխատանքի ծանրաբեռնվածության աճի վրա: Հաստիքների համալրման նպատակով կազմակերպվել և իրականացվել են բազմաթիվ մրցույթներ:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 80 ինքնավար պաշտոններից համալրվել են 72-ը (որից 6-ը՝ պաշտոնակատար) կամ 90%-ը: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 120 պաշտոններից՝ 78-ը (որից 4-ը՝ պաշտոնակատար) կամ 65%-ը, քաղաքացիական ծառայության 41 պաշտոններից՝ 37-ը

կամ 90%-ը, հայեցողական պաշտոնները, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող և քաղաքացիական աշխատանք կատարող հաստիքներն ամբողջությամբ համալրվել են:

Հարկ է նկատել, որ Կոմիտեի ծառայողների համալրման նպատակով հայտարարված մրցույթներից 2025 թվականի տարեվերջին անավարտ են մնացել 3-ը, որոնցով իրականացվում են 6 թեկնածուների բարեվարքության ուսումնասիրություններ:

2025 թվականի ընթացքում Կոմիտեն վարույթ է ընդունել և քննել մեծաքանակ քրեական վարույթներ, քննարկել դիմումներ, հաղորդումներ, ինչի արդյունքում քննիչներն աշխատել են աննախադեպ մեծ ծանրաբեռնվածության պայմաններում:

Չնայած ծանրաբեռնվածությանը՝ Կոմիտեն 2025 թվականին էական աշխատանք է կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով արդյունավետ նախաքննություն իրականացնելու, իրավակարգի ու օրինականության ամրապնդման ուղղությամբ:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում Կոմիտեի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել են էական կառուցվածքային փոփոխություններ:

Մասնավորապես, նախկինում գործած նախաքննական վարչությունների հենքի վրա ձևավորվել են վեց նոր վարչություններ՝ կոնկրետ մասնագիտացումներով, որոնք հնարավորություն են տալիս ավելի նպատակային, խորքային և համակարգված մոտեցում ցուցաբերել տարբեր բնույթի կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության գործընթացում:

Մասնագիտացված վարչությունները նաև տարիների ընթացքում կուտակում են ոլորտային պրակտիկա, խորը փորձ, նախադեպեր, մեթոդաբանություն, որն էլ ինքին դառնում է կառույցի «ինստիտուցիոնալ» հիշողությունը:

Նույն փոփոխությունների շարքում նախկին Ներքին անվտանգության վարչության[1] հենքի վրա ստեղծվել է Ներքին անվտանգության և վերահսկողության վարչություն, որն ի տարբերություն նախկինում գործած մոդելի՝ ունի երկու տարբերություն՝ առաջին՝ վերջինին է վերապահվել վերահսկողական գործառույթ, իսկ երկրորդ՝ սույն վարչությանը վերապահված չէ նախաքննական գործառույթի իրականացում:

Վերահսկողական գործառույթն իրենից ենթադրում է Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ քրեական վարույթների, հաշվառման գործերի ուսումնասիրություն և զեկույցի ներկայացում՝ նախաքննության, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետ կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

Բացի այդ, նույն գործառույթը ենթադրում է նաև Կոմիտեի քննչական վարչությունների վարույթում քննվող առանձնակի բարդություն, հասարակական հնչեղություն ունեցող, առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով նախաձեռնված վարույթների ուսումնասիրություն: Նման գործառույթի վերապահումն

[1] Մինչև 19.05.2025թ. Ներքին անվտանգության վարչությունը, իր հիմնական գործառույթներից զատ, նաև իրականացրել է քրեական վարույթներով նախաքննություն:

ամբողջապես ուղղված է նախաքննության ընթացքում հնարավոր քրեադատավարական խախտումները բացառելուն, իսկ առկայության դեպքում դրանք ի հայտ բերելուն, ինչպես նաև հետապնդում է ըստ անհրաժեշտության գործնական օգնություն ցուցաբերելու նպատակ:

Նկատի ունենալով նաև, որ «ներքին անվտանգության» գործառույթի արդյունավետությունը, շատ հաճախ, պայմանավորված է վարչության աշխատակցի կողմից այլ ծառայողների նկատմամբ անհասանելիության որոշակի մակարդակում գտնվելու գործոնով, որպիսի մեկուսացումը նվազեցնում է հնարավորությունը, որ քննության ենթակա անձինք տեղեկանան իրենց նկատմամբ իրականացվող գործողությունների մասին՝ նախքան անհրաժեշտ փաստերի հավաքագրումը, նորաստեղծ վարչությանը նախաքննական գործառույթի իրականացում չի վերապահվել: Փոփոխությունն առաջին հերթին թույլ է տալիս վարչության քննիչներին զերծ պահել անհարկի ծանրաբեռնվածությունից և կենտրոնանալ վարչության գործառույթների պատշաճ իրականացման վրա: Բացի այդ, Ներքին անվտանգության վարչության քննիչների կողմից օպերատիվ–քննչական խմբերի կազմում այլ ծառայողների հետ համատեղ աշխատանքը, դրանով պայմանավորված աշխատանքային մերձեցումը մեծացնում է ռիսկերն առ այն, որ ծառայողական քննություն կատարելիս վարչության քննիչը կարող է լինել ոչ անաչառ և նման պայմաններում առաջանում է շահերի բախման և հնարավոր ճնշումների ռիսկ: Վերոգրյալով պայմանավորված՝ վարչությանը նախաքննական գործառույթ չի վերապահվել, այլ վերահսկողական գործառույթին զուգահեռ՝ ունի ծառայողական քննություններ անցկացնելու գործառույթ:

Փոփոխություններ են իրականացվել նաև օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումում: Մասնավորապես, նախկինում գործած մեկ օպերատիվ-հետախուզական վարչության հենքի վրա ստեղծվել են չորս ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումներ՝ երկու օպերատիվ-հետախուզական վարչություն և օպերատիվ-տեխնիկական ու տեղեկատվական-վերլուծական բաժինները: Ընդ որում, պետք է ընդգծել, որ տեղեկատվական-վերլուծական բաժնին վերապահվել է նախադեպը չունեցող գործառույթներ՝ բաժինը, ի թիվս այլնի, հանրային և մասնավոր ոլորտում տեղի ունեցող չարաշահումները բացահայտելու նպատակով իրականացնելու է նշված ոլորտներում ընթացող տարբեր մրցութային գործընթացների խորացված ուսումնասիրություն՝ դրանց իրավաչափության, թափանցիկության և արդարության գնահատմամբ: Վերլուծության արդյունքում բաժինը արձանագրելու է գործընթացների խեղաթյուրման, շահերի բախման կամ այլ կասկածելի վարքագծի դրսևորումներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ կոռուպցիոն գործողությունների համար: Վերջնարդյունքում ռիսկերի վերհանման միջոցով բաժինը ձևավորելու է վերլուծական հիմք՝ հետագա իրավական արձագանքի և հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման համար:

Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում օպերատիվ–հետախուզական վարչությունների կազմում ձևավորվել են նաև երկու տարածքային ստորաբաժանումներ՝ Լոռու և Շիրակի, ինչպես նաև Վայոց ձորի և Սյունիքի տարածքային բաժինները:

Տարածքային բաժինների ստեղծումը թույլ կտա անմիջապես արձագանքել կոռուպցիոն ահազանգերին, բացի այդ, տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները տեղում հնարավորություն կունենան ավելի լավ ծանոթ լինել սոցիալական և տնտեսական հարաբերություններին, ինչը մեծ առավելություն է կոռուպցիոն ռիսկերի նույնականացման հարցում: Բացի այդ, տարածքային ներկայությունը թույլ է տալիս իրականացնել ոչ միայն հետախուզական, այլ նաև՝ կանխարգելիչ աշխատանք:

Տարածքային ստորաբաժանումներում օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարվել են մրցույթներ, որոնք ընթացքի մեջ են:

Բացի վերոգրյալը, Կոմիտեի գործունեության առավել հրատապ և արդիական հիմնահարցերի քննարկման, դրանց արագ և համարժեք արձագանքման նպատակով ստեղծվել է խորհրդակցական մարմին: Այն կապահովի ավելի արդյունավետ, մասնագիտացված, թափանցիկ ու պատասխանատու որոշում կայացնելու գործընթաց՝ միավորելով փորձը, կարծիքները և շահերը՝ ի նպաստ ավելի լավ կառավարման:

Անձնական պաշտպանության միջոցների հաշվառման, պահպանման, վերահսկման, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության պլանավորման, ուսումնավարժությունների և հաշվետվողականության հետ կապված գործառույթների իրականացման նպատակով ստեղծվել է սպառազինության ապահովման և քաղաքացիական պաշտպանության բաժին:

Կոմիտեի աշխատանքի արդյունավետության բարձրացման և մասնագիտական ներուժի արդյունավետ օգտագործման, գործնականում առաջացող խնդիրների հաղթահարման, ինչպես նաև վարույթների քննության որակական բարելավման նկատառմամբ հաշվետու ժամանակահատվածում՝ Կոմիտեի նախագահի կողմից տրվել է 48 հրաման և 7 հանձնարարական, որոնք, ի թիվս այլնի, ներառել են հետևյալը՝

«Փողերի լվացման, ահաբեկչության դեմ ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի» 2025-2028 թվականների ազգային ռազմավարության գործողությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով՝

✓ *ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի հունիսի 13-ի «Փողերի լվացման, ահաբեկչության դեմ ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի» 2025-2028 թվականների ազգային ռազմավարության՝ Հակակոռուպցիոն կոմիտեին վերաբերելի գործողությունները սահմանված ժամկետներում կատարելու վերաբերյալ» 23-Լ հրամանով հստակ սահմանվել է վերոնշյալ ռազմավարությամբ հաստատված՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին վերաբերելի գործողությունները սահմանված ժամկետներում կատարելու հանձնառությունը:*

Նախաքննության կազմակերպման և դրա արդյունավետության ապահովման նպատակով՝

✓ *ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի ապրիլի 29-ի «Հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով, ինչպես նաև հանրային քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական*

վարույթների նախաքննությունը կազմակերպելու վերաբերյալ» 01-Լ հանձնարարականով սահմանվել է հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով, ինչպես նաև հանրային քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական վարույթների նախաքննությունը կազմակերպելու կարգը:

✓ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից քրեական վարույթներով միջնորդությունները դատարան ներկայացնելու կարգի վերաբերյալ» 02-Լ հանձնարարականով սահմանվել է քննիչների կողմից քրեական վարույթներով միջնորդությունները դատարան ներկայացնելու կարգը:

✓ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից վիճակագրության բաժին անհրաժեշտ տվյալների ներկայացման կարգի վերաբերյալ» 03-Լ և «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից վիճակագրական քարտերը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն ներկայացնելու կարգի վերաբերյալ» 04-Լ հանձնարարականներով սահմանվել է Կոմիտեի քննիչների կողմից վիճակագրության բաժին անհրաժեշտ տվյալների ներկայացման կարգը:

✓ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի հուլիսի 24-ի 05-Լ հանձնարարականով սահմանվել է դատարանի որոշմամբ կիրառվող խափանման միջոց ընտրելու, այդ նպատակով միջնորդությունները դատարան ներկայացնելու, ձերբակալման գործընթացները, ինչպես նաև մինչդատական ակտերի վիճարկման վարույթով դատարանի պահանջած նյութերը ներկայացնելը պատշաճ կազմակերպելու կարգը:

✓ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ի 07-Լ հանձնարարականով սահմանվել է մինչդատական ակտերի վիճարկման վարույթներով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգի պահպանման, դատարանի կողմից պահանջված նյութերի պատշաճ ներկայացման, անհրաժեշտության դեպքում՝ դատարանի պահանջով դատական նիստին պատշաճ կերպով ներկայանալու կարգը:

Կոմիտեում աշխատանքի արդյունավետության բարձրացումը խթանելու, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանումը և տարվա լավագույն ծառայողին պարզելու, վերջիններիս աշխատանքային և մասնագիտական գործունեությունը պատշաճ գնահատականի արժանացնելու նկատառումներից ելնելով՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի նոյեմբերի 18-ի 56-Լ հրամանով սահմանվել է «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տարվա լավագույն ստորաբաժանում և տարվա լավագույն ծառայող» ճանաչելու կարգը և պայմանները:

Քննված քրեական վարույթների մասին

2025 թվականի ընթացքում Կոմիտեի քննիչների վարույթում **քննվել է 2585 քրեական վարույթ *(այդ թվում՝ կրկնակի)*,** որոնցից **ավարտվել է 890-ը**: Ավարտված վարույթներից **273-ը՝ 661 անձանց վերաբերյալ** մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան**, իսկ 617-ը՝ կարճվել**: Կարճված վարույթներից 54-ի՝ վարույթը կարճելու որոշումները դատախազի կողմից վերացվել կամ չեն հաստատվել, իսկ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված վարույթներից դատախազը չի հաստատել 8-ի եզրակացությունը[2]:

Ընթացքը լուծված քրեական վարույթներից 124-ը քննվել են 2-7 տարի ժամկետում (33-ը մաս անջատված քրեական վարույթներ), իսկ 219-ը՝ 1 տարի ժամկետում (36-ը մաս անջատված քրեական վարույթներ):

Քննության արդյունավետության բարձրացման և միաժամանակ ծանրաբեռնվածության աճի մասին են վկայում 2024 թվականի վիճակագրական տվյալների հետ համեմատական վերլուծությունը: Այսպես՝ 2025 թվականին Կոմիտեում 296 վարույթ ավելի է քննվել, քան 2024 թվականի ընթացքում (2024 թվականին՝ 2289 վարույթ), 2025 թվականին նախորդ տարվա համեմատությամբ՝ ավարտված վարույթների թիվն աճել է 41-ով (2024 թվականին՝ 849 վարույթ):

Այսինքն՝ 2024 թվականի համեմատությամբ, 2025 թվականի ընթացքում քննված վարույթների թիվն աճել է 12,9 %-ով, ավարտված վարույթների թիվը՝ 4,8 %-ով:

Նկատի ունենալով, որ մինչդատական վարույթի վերաբերյալ վիճակագրության գործող կարգավորումների համաձայն՝ հաշվառումը տարվում է կրկնակի քննված վարույթների ցուցանիշների ընդգրկմամբ, ուստի այսուհետ տեղեկությունները ներկայացվում են կրկնակի քննության տվյալների ներառմամբ:

Այսպես.

2025 թվականի ընթացքում Կոմիտեի քննիչների **վարույթում քննվել է 2585 քրեական** վարույթ **(այդ թվում՝ կրկնակի),** որից.

- ✓ փոխանցվել է նախորդ տարվանից ---------- 869,
- ✓ ընդունվել է վարույթ ---------- 1716:

Վարույթ ընդունված քրեական վարույթներից՝

- ✓ **նախաձեռնվել է Կոմիտեում**---------- 1239,
- ✓ **քննվող քրեական վարույթից մաս է անջատվել** ---------- 166,
- ✓ **ստացվել է այլ մարմիններից**---------- 249,
- ✓ **վերսկսվել են նախկինում կարճված քրեական վարույթներ** ---------- 54,
- ✓ **դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը չի հաստատվել և վարույթ է վերադարձվել** ---------- 8:

---

[2] Հետագա ընթացքի մասին նշված է «Հսկողություն և վերահսկողություն» տողի ներքո:

Հաշվետու ժամանակահատվածում քննված 2585 քրեական վարույթից՝

- ✓ **ավարտվել է ---------- 890,**

կամ 34,4%-ը, որից **273** քրեական վարույթ **661** անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, **617**-ը՝ կարճվել,

- ✓ **միացվել է ---------- 351,**
- ✓ **ուղարկվել է ըստ քննչական ենթակայության ---------- 428,**
- ✓ **դատախազի կողմից վերացվել է քրեական վարույթից մաս անջատելու մասին որոշումը ---------- 3,**
- ✓ **անավարտ է մնացել ---------- 913:**

Դատարան ուղարկված քրեական վարույթները *(առանց կրկնակիի)*, ըստ հանցագործությունների բնույթի, եղել են.

Ընտրությունների հետ կապված հանցագործություններ՝ 5 քրեական վարույթ՝ 10 անձի վերաբերյալ,

- **Հափշտակություններ՝** 48 քրեական վարույթ՝ 101 անձի վերաբերյալ,
- **Տնտեսական հանցագործություններ՝** 22 քրեական վարույթ՝ 56 անձի վերաբերյալ,
- **Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններ՝** 158 քրեական վարույթ՝ 405 անձի վերաբերյալ,
- **Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ՝** 1 քրեական վարույթ՝ 6 անձի վերաբերյալ,
- **Թմրամիջոցների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններ՝** 1 քրեական վարույթ՝ 2 անձի վերաբերյալ,
- **Այլ հանցագործություններ՝** 30 քրեական վարույթ՝ 81 անձի վերաբերյալ:

2025 թվականի ընթացքում մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական վարույթներով դատի է տրվել **298 հանրային ծառայող** (այդ թվում՝ նախկին պաշտոնատար անձինք), որոնք, ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների, հանդիսացել են՝

1) ***ՀՀ նախագահ՝ 2*** *(նույն անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել երկու տարբեր քրեական վարույթների շրջանակներում),*
2) ***ՀՀ վարչապետ՝ 1,***
3) ***ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ 1,***
4) ***ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության պետ՝ 1,***
5) ***ՀՀ դատական իշխանության աշխատակիցներ՝ 5,***

այդ թվում՝

- ✓ *դատավոր - 2,*
- ✓ *դատավորի օգնական - 2,*

- ✓ աշխատակից – 1,

6) ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցներ՝ 47,

այդ թվում՝

- ✓ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ - 1,
- ✓ զորամասի հրամանատար - 2,
- ✓ զորամասի հրամանատարի տեղակալ - 6,
- ✓ գումարտակի հրամանատար - 1,
- ✓ գումարտակի հրամանատարի տեղակալ - 2,
- ✓ վաշտի հրամանատար - 1,
- ✓ դասակի հրամանատար - 2,
- ✓ ջոկի հրամանատար - 1,
- ✓ ծառայության պետ - 5,
- ✓ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության աշխատակից - 5,
- ✓ բաժնի պետ - 2,
- ✓ ՌՈ բաժնի պետի տեղակալ – 1,
- ✓ բաժանմունքի պետ - 2,
- ✓ աշխատակից - 16,

7) ՀՀ արդարադատության նախարարության աշխատակիցներ՝ 6,

այդ թվում՝

- ✓ ՀԿԱԾ հարկադիր կատարող - 1,
- ✓ ՀԿԱԾ աշխատակից - 1,
- ✓ ՔԿՀ պետի տեղակալ – 1,
- ✓ ՔԿՀ աշխատակից – 3,

8) ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցներ՝ 66,

այդ թվում՝

- ✓ ոստիկանության պետի տեղակալ – 1,
- ✓ բաժնի պետ - 3,
- ✓ բաժնի պետի տեղակալ - 2,
- ✓ գումարտակի հրամանատար - 1,
- ✓ վաշտի հրամանատար - 1,
- ✓ դասակի հրամանատար - 2,
- ✓ տեսուչ - 9,
- ✓ ԱՎՎ աշխատակից - 2,
- ✓ ոստիկան - 6,
- ✓ օպերլիազոր – 2,
- ✓ պարեկ - 26,
- ✓ աշխատակից – 11,

9) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի աշխատակիցներ՝ 2,

այդ թվում՝

- ✓ *բաժանմունքի պետ - 1,*
- ✓ *աշխատակից - 1,*

10) ՀՀ շրջակա միջավայրի նախարարության աշխատակիցներ՝ 14,

այդ թվում՝

- ✓ *էկոպարեկ - 6,*
- ✓ *աշխատակից - 1,*
- ✓ *«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրեն – 1,*
- ✓ *«Հայանտառ» ՊՈԱԿ աշխատակից – 6,*

11) ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակից՝ 1,

12) ՀՀ առողջապահության նախարարության աշխատակից՝ 4,

13) ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակից՝ 1,

14) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարության աշխատակիցներ՝ 5,

15) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցներ՝ 5,

այդ թվում՝

- ✓ *բաժնի պետ - 2,*
- ✓ *սոցիալական աշխատող - 3,*

16) ՀՀ ՔԿ պաշտոնատար անձինք ՝ 7,

այդ թվում՝

- ✓ *վարչության պետ – 1,*
- ✓ *վարչության պետի տեղակալ – 2,*
- ✓ *քննիչ - 3,*
- ✓ *աշխատակից - 1,*

17) ՀՀ ՊԵԿ աշխատակիցներ ՝ 17,

այդ թվում՝

- ✓ *բաժնի պետի տեղակալ - 2,*
- ✓ *տեսուչ - 11,*
- ✓ *օպերլիազոր - 2,*
- ✓ *աշխատակից - 2,*

18) ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչ՝ 1,

19) ՀՀ ԲՏԱ ռազմաարդյունաբերական կոմիտեի նախագահ՝ 1,

20) ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի աշխատակիցներ՝ 6,

այդ թվում՝

- ✓ *ղեկավար – 1,*
- ✓ *տեսուչ – 4,*
- ✓ *աշխատակից - 1,*

21) ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակիցներ ՝ 6,

այդ թվում՝

- ✓ *բաժնի պետ – 1,*

- ✓ *ստորաբաժանման ղեկավարի տեղակալ – 1,*
- ✓ *աշխատակից - 4,*

22) ՀՀ ջրային կոմիտեի աշխատակից՝ 3,

23) ՀՀ վարչապետի անվտանգության աշխատակից՝ 1,

24) Քաղաքապետարանի աշխատակիցներ՝ 32,

այդ թվում՝

- ✓ *քաղաքապետ - 3,*
- ✓ *քաղաքապետի տեղակալ - 1,*
- ✓ *վարչական շրջանի ղեկավար – 3,*
- ✓ *վարչական շրջանի ղեկավարի տեղակալ – 1,*
- ✓ *վարչության պետ - 3,*
- ✓ *վարչության պետի տեղակալ - 1,*
- ✓ *բաժնի պետ – 3,*
- ✓ *ՀՈԱԿ տնօրեն – 1,*
- ✓ *ծառայության պետ – 1,*
- ✓ *աշխատակից - 15,*

25) Մարզպետարանի աշխատակիցներ՝ 9,

այդ թվում՝

- ✓ *ՊՈԱԿ տնօրեն - 8,*
- ✓ *ՊՈԱԿ տնօրենի տեղակալ - 1,*

26) Համայնքապետարանի աշխատակիցներ՝ 53,

այդ թվում՝

- ✓ *համայնքի ղեկավար - 28,*
- ✓ *համայնքի ղեկավարի տեղակալ - 3,*
- ✓ *բնակավայրի ղեկավար – 9,*
- ✓ *բաժնի պետ - 7,*
- ✓ *բաժնի պետի տեղակալ - 1,*
- ✓ *աշխատակից – 5,*

27) Երևանի Մ. Հերացու անվան թիվ 1 հիվանդանոցային համալիրի ակնաբուժական կլինիկայի աշխատակից՝ 1,

Դատարան ուղարկված քրեական վարույթներից ապացուցման տեսակետից առավել բարդ, բազմադրվագ և ուշագրավ են եղել հետևյալ քրեական վարույթները.

1. ՀՀ պաշտոնաթող նախագահը, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, «Թի Էս Էս Սի Արմենիա» ՍՊ ընկերության միակ մասնակցի և տնօրենի օգտին գործողություններ կատարելուն նպաստելու, այն է՝ այդ ընկերությանը տրամադրված ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության հատուկ լիցենզիաներով ընկերության 100 տոկոս բաժնեմասը ՀՀ-ում ոչ ռեզիդենտ ընկերությանը վաճառելու գործարքին չխոչընդոտելու համար, 2008 թվականի

փետրվարին և ապրիլին մի խումբ անձանց, այդ թվում՝ իր դստեր ամուսնու, այդ ժամանակ ՀՀ վարչապետի ավագ օգնականի պաշտոնը զբաղեցնող անձի օժանդակությամբ հիշյալ ընկերության տնօրենից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 924.950.000 ՀՀ դրամին համարժեք 2.985.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Քննիչ Ա. Սարգսյան:

2. ՀՀ երկրորդ նախագահի որդին, հանդիսանալով «ԼԼ Բիմբո» ՍՊ ընկերության համահիմնադիրը, հնարավորություն ունենալով կանխորոշել դրա գործադիր տնօրենի որոշումները, միջոցներ տրամադրելու և խոչընդոտներ վերացնելու եղանակով, նշված ընկերության տնօրենի հետ օժանդակել է իր հետ փոխկապակցված անձի՝ ՀՀ նախագահի կողմից օրենքով նախատեսված արգելքին հակառակ ձեռնարկատիրական գործունեությանը մասնակցելուն և առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալուն: Այնուհետև, նպատակ ունենալով քողարկել առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու արդյունքում ձեռք բերված գույքի հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը, ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, իրական իրավունքներն ու պատկանելությունը, գույքին օրինական տեսք տալու նպատակով այն օրինականացրել է մի շարք բանկային փոխանցումների միջոցով այդ եկամուտները գույքի ձեռք բերմանն ուղղելու եղանակով:

Քննիչ Ս. Մխիթարյան:

3. ՀՀ տարածքային կառավարման նախարարի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի և ՀՀ վարչապետի պաշտոնները զբաղեցրած անձը, պաշտոնավարման ընթացքում օգտագործելով իր դիրքը և ազդեցությունը պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների վրա, հանձնարարել է կազմակերպել անօրինական աճուրդներ, որոնց արդյունքում շուկայականից անհամեմատ ցածր արժեքով ձեռք է բերել Տավուշի մարզի Դիլիջան համայնքում ընդհանուր շուրջ 75.000 քմ մակերեսով հողամասերը, Արարատի մարզի Նարեկ համայնքում՝ ընդհանուր 120 հա մակերեսով վարելահողն ու արոտավայրը, Մխչյան համայնքում՝ ընդհանուր 48.4092 հա մակերեսով հողատարածքները:

Արդյունքում՝ շուկայականից անհամեմատ ցածր արժեքով ձեռք բերված հիշյալ անշարժ գույքերն առանց իրավաչափ հիմքի դուրս են բերվել համայնքների գույքային ֆոնդից: Այնուհետև նա, շուրջ 240 մլն ՀՀ դրամ շուկայական արժեքով նշված անշարժ գույքերի հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով, ապահովել է դրանց գրանցումն իր մերձավորների անվամբ և հետագայում գույքերի զգալի մասը շինծու գործարքների արդյունքում գրանցել կնոջ, ինչպես նաև իր կողմից կառավարվող ընկերության անվամբ՝ փաստացի տնօրինելով և տիրապետելով դրանք:

Բացի այդ, նախկին բարձրաստիճան նույն պաշտոնյան ապօրինի կերպով ներգրավված է եղել ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ հովանավորելով ավազի անօրինական արդյունահանմամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին, այդ

թվում՝ իր հետ փոխկապակցված անձի անվամբ հիմնադրված «Մեծն Հովնան» ՍՊ ընկերությանը:

Մասնավորապես՝ բարձրաստիճան պաշտոնյան 2006-2016թթ. ընթացքում հիշյալ ընկերությանը հատկացված տեղամասին հարակից տարածքում ավազի արդյունահանում իրականացնող «Ավազահատիկ» ՍՊ ընկերությանը տիրանալու, երկու ընկերությունները փաստացի միավորելու և դրա արդյունքում առավել շահավետ տնտեսական գործունեություն ծավալելու անձնական դրդումներից ելնելով՝ եղբոր, վերջինիս որդու և այլ անձանց միջոցով 2008-2015 թթ. ընթացքում մասնակցել է ավազի արդյունահանմամբ զբաղվող վերը նշված երկու ընկերությունների կառավարմանը և «Ավազահատիկ» ՍՊ ընկերության ավազի հանքի շահագործումից ստացել առանձնապես խոշոր չափերի՝ շուրջ 230 մլն ՀՀ դրամի շահույթ:

Այնուհետև, ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու արդյունքում ձեռք բերված գույքի հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով, նա վերոհիշյալ գումարը միախառնել է իր այլ եկամուտների հետ, ապա տարատեսակ քաղաքացիաիրավական գործարքների, այդ թվում՝ տարբեր գույքեր ձեռք բերելու, բանկային տարբեր գործարքներ կատարելու եղանակներով դրան հաղորդել օրինական տեսք:

Բացի այդ, նախաքննությամբ պարզվել է, որ նույն բարձրաստիճան պաշտոնյան գործուն միջոցներ չի ձեռնարկել իր հետ փոխկապակցված անձի ընկերության կողմից սահմանված կարգի խախտմամբ ավազի ապօրինի արդյունահանումը կանխելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ 2014-2016 թվականների ընթացքում և դրանից հետո նրա հետ փոխկապակցված անձը հողօգտագործումը չի իրականացրել ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասի կոորդինատներին համապատասխան, այլ գետավազի արդյունահանումն իրականացրել է նաև Արաքս գետի խառնարանային հատվածի անմիջապես հունից՝ դրա հատակը խորացնելով շուրջ երկու մետր: Նշված գործողությունների հետևանքով ընկերության կողմից ավազի լվացման արտադրամասի շրջակա տարածքում 5950մ2 մակերեսով առաջացել է հողի դեգրադացում, որի հետևանքով փոխվել և ցամաքել է Արաքս գետի՝ ՀՀ պետական սահմանի համապատասխան հատվածում գտնվող շուրջ 6 կմ երկարությամբ հիմնական հունը՝ սահմանի մոտ առաջացնելով 307.82 հա մակերեսով կղզյակ:

Քննիչ Ս. Մխիթարյան:

4. 2000-2014 և 2016-2018 թվականների ընթացքում ՀՀ նախագահի առաջին օգնականի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար-փոխվարչապետի և ՀՀ փոխվարչապետի պաշտոնները զբաղեցրած պաշտոնատար անձը, 2003-2018 թվականների ընթացքում կատարած հանցագործությունների՝ կաշառքներ ստանալու և պաշտոնեական լիազորությունների չարաշահման դեպքերի հետևանքով ստացված գույքերի իրական բնույթն ու ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու

նպատակով 2004-2018 թվականների ընթացքում օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ 4.921.302.379 ՀՀ դրամի եկամուտները:

Քննիչ Ա. Սարգսյան:

5. 2002 թվականի հոկտեմբերի 1-ից 2009 թվականի մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի «Կենտրոն» թաղային համայնքի ղեկավարի, իսկ 2009 թվականի մարտի 4-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 8-ը Երևանի քաղաքապետի պաշտոնները զբաղեցրած անձը, Երևան քաղաքի «Կենտրոն» համայնքում գտնվող, նշված ժամանակահատվածներում ընդհանուր 2.327.584.000 ՀՀ դրամ արժեք ունեցող 25 անշարժ գույքն իրենը, իսկ 2 անշարժ գույքն իր հետ փոխկապակցված անձինը դարձնելու նպատակով, 2004-2010 թվականներն ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև 2004-2017 թվականների ընթացքում, այլ անձանց օժանդակությամբ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված նշված՝ առանձնապես խոշոր չափերի արժողությամբ անշարժ գույքերի մի մասը, դրդել և կազմակերպել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի արժողությամբ անշարժ գույքերի մի մասի օրինականացումը:

Քննիչ Ս. Մխիթարյան:

6. ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Արմավիրի մարզի հաշվառման-քննական բաժնի ավագ տեսուչն իր կնոջ հորը ծանոթացրել է իր ընկերոջ հետ՝ նրա մտերիմ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի օգնությամբ, գործող իրավակարգավորումների և կարգերի շրջանցմամբ՝ առանց համապատասխան փաստաթղթերի և առանց կենդանիներին կարանտինացնելու, 150.000-200.000 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ Արաբական Միացյալ Էմիրություններ արտահանելու գործընթացը գումարի դիմաց կազմակերպելու համար: Հիշյալ գործընթացն սկսելու համար պատգամավորը պահանջել է 100.000 ԱՄՆ դոլար գումար՝ նշելով, որ գումարի մյուս մասը՝ 100.000 ԱՄՆ դոլարը (200.000 ԱՄՆ դոլարը համարժեք է 77.292.000 ՀՀ դրամին), կպահանջի հետագայում՝ գործընթացի մեկնարկից հետո:

Բացի այդ, «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊ ընկերության հիմնադիր-նախագահը ՀՀ Ազգային ժողովի նույն պատգամավորին խնդրել է իր լիազորությունների շրջանակում միջոցներ ձեռնարկել Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասի Էստոնական փողոցի 8-րդ հասցեում գտնվող «Հենրի Մորգենթաուի անվան թիվ 136 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վթարային վիճակում գտնվող շենքը քանդելու, այդ հողատարածքի մի մասի վրա դպրոցի նոր շենք կառուցելու, իսկ մյուս մասը՝ պետության կողմից «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊ ընկերությանն անհատույց տրամադրելու և դրա վրա բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու թույլտվություն ստանալու համար: Այդ գործընթացը կազմակերպելու նպատակով «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊ ընկերության հիմնադիր-նախագահը 2021 թվականին մաս-մաս,

ընդհանուր՝ 23.000 ԱՄՆ դոլար (23.000 ԱՄՆ դոլարը համարժեք է 10.929.370 ՀՀ դրամին) և 300.000 ՀՀ դրամ է տվել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին:

Քննիչ Ա. Բարսեղյան:

7. ՀՀ ոստիկանապետի տեղակալի պաշտոնը զբաղեցրած անձը 2008 թվականի մարտի 1-ին կազմակերպել է ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից բռնության և հատուկ միջոցների գործադրմամբ Երևան քաղաքի «Ազատության» հրապարակում նստացույց անող խաղաղ ցուցարարներին ցրելու, ապա՝ քաղաքի կենտրոնական հատվածներում նրանց կուտակումները, հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելու գործողությունները, որի հետևանքով հասարակության և պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

Քննիչ Ս. Մխիթարյան:

8. 1999 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2003 թվականի հոկտեմբերի 8-ը ՀՀ ՊՆ 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի, այնուհետև մինչև 2009 թվականի հունվարի 26-ը ՀՀ ՊՆ երկրորդ բանակային կորպուսի հրամանատարի, այնուհետև մինչև 2017 թվականի դեկտեմբերի 05-ը ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի, ապա՝ 2018 թվականի մարտի 22-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (այսուհետ նաև՝ ՀԱՊԿ) միացյալ շտաբի պետի տեղակալի պաշտոնները զբաղեցրած անձը, օրենքով նախատեսված արգելքին հակառակ, այն է՝ իրավունք չունենալով անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, 2001 թվականի մարտի 21-ից վստահված անձանց, այդ թվում՝ իր հետ մտերիմ, ապա նաև՝ խնամիական հարաբերությունների մեջ գտնվող, ընկերության մեկ այլ բաժնետիրոջ և տնօրենի օժանդակությամբ մասնակցել է «ԱՔՎԱՏԻԿ» ՍՊ ընկերության կառավարմանը՝ արտոնություններ, առավելություններ տրամադրելով նշված կազմակերպությանը և հովանավորելով իրականացվող գործունեությունը: ՀՀ ՋՈՒ բարձրաստիճան պաշտոնատար անձը, պաշտոնեական դիրքից բխող ազդեցությունը, հեղինակությունը և կապերը ի շահ ընկերության օգտագործելով, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերք մատակարարելու մրցույթների արդյունքում առանց խոչընդոտների հաղթող ճանաչվելու և ՊՆ հետ կնքված 7.559.414.437 դրամի պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների ընդունումը և դրանց դիմաց վճարումը, ըստ էության, գործունեության համար անհրաժեշտ թույլտվությունների ստացումն ապահովելու միջոցով, ինչից հետո նպատակ ունենալով քողարկելու առևտրային կազմակերպությանն առավելություններ, արտոնություններ տրամադրելու, դրա գործունեությունը հովանավորելու հետ զուգորդված ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցների հանցավոր ծագումը, դրանց իրական բնույթը, ծագման աղբյուրը, տնօրինման եղանակը, իրական իրավունքներն ու պատկանելությունը, գույքին օրինական տեսք տալու նպատակով, այն օրինականացրել է մի շարք բանկային

փոխանցումների և փոխարկումների միջոցով, այդ թվում՝ այլ անձանց անվամբ գույք ձեռք բերելու և իր հայեցողությամբ տնօրինելու եղանակով:

Բացի այդ, ՀՈՒ բարձրաստիճան հիշյալ պաշտոնյան, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի, ապա՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած իր՝ 2017 թվականի պաշտոնատար անձի պաշտոնը դադարեցնելու հայտարարագրում, 2018 թվականի պաշտոնատար անձի պաշտոնը ստանձնելու, ինչպես նաև նույն թվականի տարեկան հայտարարագրերում, 2019 թվականի տարեկան և 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին հայտարարագրերում թաքցրել է գույքերի և եկամուտների վերաբերյալ տվյալները, ինչը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքերի և եկամուտների չհայտարարագրմանը:

Քննիչ Գ. Մարգարյան:

9. Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորն իր վարույթում քննվող քաղաքացիական գործով դիտավորությամբ առանձին դեպքերում չի կատարել, իսկ որոշ դեպքերում՝ ոչ պատշաճ է կատարել իր ծառայողական պարտականությունները, որն էական վնաս է պատճառել անձանց և պետության իրավունքներին ու օրինական շահերին՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետևանք, այն է՝ հանցավոր կազմակերպության անդամները, օգտագործելով դատավորի կողմից կայացված ակնհայտ անարդար դատական ակտը, խարդախությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ 38 մլն ՀՀ դրամ արժեքով գույքը, և օրինականացրել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը:

Քննիչ Մ. Այդինյան:

10. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորը «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև քրեադատավարական նորմերով պարտավոր լինելով գործի քննությունը և լուծումն իրականացնել ողջամիտ ժամկետում ու ապահովել գործի արդարացի քննությունը, օրենքով նախատեսված պարտականությունները կատարելու փոխարեն ձեռք է բերել պայմանավորվածություն իր վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալի օգտին ապօրինի գործողությունների և անգործության, այն է՝ արհեստական հիմքերի ստեղծմամբ ամբաստանյալի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու և որոշումը սահմանված կարգով փորձագիտական հիմնարկ չուղարկելու եղանակով դատաքննությունն անհարկի ձգձգելու ու արդյունքում ամբաստանյալին մեղսագրվող հանցանքի կատարման վաղեմության ժամկետները լրանալու հիմքով վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ:

Ամբաստանյալի օգտին վերը նշված ապօրինի գործողությունների և անգործության համար, դատավորը 2025 թվականի ապրիլի 9-ին օժանդակող անձի միջոցով

ամբաստանյալից պահանջել է մինչև 2025 թվականի մայիսի 1-ն իրեն տալ խոշոր չափերով՝ 3.892.500 ՀՀ դրամին համարժեք՝ 10.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Համաձայնելով դատավորի կողմից կաշառք տալու առաջարկին՝ ամբաստանյալն իր օգտին ապօրինի գործողությունների և անգործության համար դատավորի կողմից կաշառք ստանալուն օժանդակող անձին 2025 թվականի ապրիլի 22-ին տվել է պահանջված խոշոր չափերով՝ 10.000 ԱՄՆ դոլար կաշառքը, ինչի մասին օժանդակող անձը նույն օրը հայտնել է դատավորին:

Քննիչ Գ. Հովհաննիսյան:

11. 2010-2018 թվականներին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության պետի պաշտոնը զբաղեցրած անձը, շահադիտական և անձնական շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել է պաշտոնեական լիազորությունները, կատարել պաշտոնեական կեղծիք և օրինականացրել հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով՝ 140.108.050 ՀՀ դրամ արժեքով գույքը: Այսպես՝ 2013 թվականի սեպտեմբերի 16-ին նա կազմակերպել է կեղծ աճուրդ, որի արդյունքում ք. Երևան, Վ. Անտառային փողոց, 136/3 հասցեում գտնվող 250 քմ մակերեսով հողամասը 10.500.000 ՀՀ դրամ արժեքով վաճառվել է իր մտերիմին: Այնուհետև 2016 թվականի մայիսի 3-ին նա համաձայնություն է տվել վերոնշյալ հողամասին կից 195 քմ մակերեսով հողամասը իր մտերիմին ուղղակի վաճառքով օտարելու մասին քաղաքապետի որոշման նախագծին, նախապատրաստել նախագծի համաձայնեցումը և ապահովել հողամասի ուղղակի վաճառքով օտարելու գործընթացը, միաժամանակ՝ չի արձանագրել կցվող հողամասի վրա ինքնակամ կառույցի առկայության հանգամանքը, ինչի արդյունքում ավարտական ակտը տրամադրելու պահին 125.164.800 ՀՀ դրամ օտարման գնով շենքը մնացել է ինքնակամ և չի օրինականացվել սահմանված կարգով: Այնուհետև 2018 թվականի ապրիլի 24-ին պաշտոնատար անձը համաձայնեցրել և կազմակերպել է նշված հողամասում բազմաբնակարան շենքի կառուցման շինթույլտվության տրամադրման գործընթացը՝ դրանում ներառելով ակնհայտ կեղծ տեղեկություններ և խախտելով մի շարք քաղաքաշինական նորմեր: Դրանից հետո 2018 թվականի մայիսի 5-ին կնքված ձևական (շինծու) նվիրատվության պայմանագրով, իր մտերիմը, իր հետ ունեցած հանցավոր պայմանավորվածության համաձայն, քաղաք Երևան, Վ. Անտառային փողոց 136/3 շենք հասցեում գտնվող հիշյալ հողամասերը՝ ընդհանուր 445 քմ ընդհանուր մակերեսով, և դրանց վրա կառուցված 1117.7 քմ մակերեսով անավարտ շինությունն անհատույց օտարել (փոխանցել) է իր ընտանիքի անդամներին, ինչի արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր՝ ընդհանուր 140.108.050 ՀՀ դրամի չափով գույքը՝ 0,0445 հա մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բազմաբնակարան շենքը, օրինականացվել են:

Քննիչ Մ. Այդինյան:

12. 2004-2011թթ. ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած անձը շահադիտական և անձնական շահագրգռվածությամբ, այն է՝ իր մտերիմ անձի հետ ունենալով ընկերական կապեր, 2006 թվականի հոկտեմբերի 20-ին նրանից փաստացի անհատույց, որպես իր մոր սեփականություն ընդունելով 186,48 քառ. մետր մակերես ունեցող Երևան քաղաքի Աբովյան փողոցի 8-րդ շենքի 13-րդ բնակարանը, չի կատարել իր ծառայողական պարտականությունները, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի № 421-Ա որոշմամբ Երևան քաղաքի Աբովյան 10 հասցեում գտնվող 1250 քմ ընդհանուր մակերեսով շենքը և 56 քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակը ուղիղ վաճառքով օտարելու մասին պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման համար «Լոկալ Դիվելոփըրզ» ՍՊ ընկերության նկատմամբ տույժ հաշվարկելու, որից հետո պարտավորությունների չկատարման դեպքում համապատասխան հայցադիմումով դատարան դիմելու ընթացակարգ չի նախաձեռնել, ավելին՝ իր մտերիմ անձի կողմից խոչընդոտները վերացնելու և միջոցներ տրամադրելու եղանակով օժանդակության պայմաններում շարունակել է իրագործել իր հանցավոր մտադրությունը, այն է՝ ընդունել է ժամկետի խախտմամբ Ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունը, որը չի հավաստել գույքի հիմնական վերանորոգման և վերականգնման նպատակով 150.000.000 ՀՀ դրամ ներդրում կատարած լինելու փաստը, այլ հավաստել է շինարարական վերանորոգման աշխատանքների ծախսը 78.309.330 ՀՀ դրամ լինելու փաստը, և իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ ներդրումներն իբրև կատարված լինելու մասին տեղեկատվություն է տրամադրել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին, որի հիման վրա ակնհայտ ոչ իրավաչափ եղանակով դադարեցվել է Երևան քաղաքի Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության գրավի իրավունքը, այլ խոսքով՝ ավարտվել է Երևան քաղաքի Աբովյան փողոցի 10 հասցեում գտնվող պետական սեփականություն համարվող շենքի օտարման գործընթացը:

Հիշյալ արարքով պետության համար առաջացել են ծանր հետևանքներ, այն է՝ առանձնապես խոշոր չափերով՝ 221.757.000 ՀՀ դրամ գնահատված անշարժ գույքն առանց իրավաչափ հիմքի դուրս է եկել պետության գույքային հաշվեկշռից:

Բացի այդ, նույն պաշտոնատար անձը, կրկին նույն շահագրգռվածությամբ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի № 864-Ն որոշմամբ ՝ Երևանի Աբովյան 8 հասցեում գտնվող 638.2 քառ. մետր տարածքը ուղիղ վաճառքով օտարելու մասին պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման համար «Պրոգրես Արմենիա» ՍՊ ընկերության նկատմամբ տույժ հաշվարկելուն ուղղված միջոցներ չի ձեռնարկել, որից հետո պարտավորությունների չկատարման դեպքում համապատասխան հայցադիմումով դատարան դիմելու ընթացակարգ չի նախաձեռնել, որի արդյունքում ակնհայտ ոչ իրավաչափ եղանակով Երևան քաղաքի Աբովյան փողոցի 8 հասցեում գտնվող անշարժ գույքը դուրս է եկել պետության գույքային հաշվեկշռից:

Հիշյալ արարքով պետության համար առաջացել են ծանր հետևանքներ, այն է՝ առանձնապես խոշոր չափերով՝ 178.464.591 ՀՀ դրամ կադաստրային արժեք ունեցող անշարժ գույքն առանց իրավաչափ հիմքի դուրս է եկել պետության գույքային հաշվեկշռից:

Քննիչ Ս. Սամվելյան:

13. 2008-2016 թվականներին Էջմիածնի քաղաքապետի պաշտոնը զբաղեցրած անձը, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով և շահադիտական նպատակով, պաշտոնեական կեղծիքի կատարմամբ, համայնքային սեփականություն համարվող օտարման ոչ ենթակա զբոսայգի հանդիսացող առանձնապես խոշոր չափի հողատարածքների նպատակային նշանակությունը ոչ իրավաչափ եղանակով փոխելով՝ վերացրել է օտարման արգելքը, այնուհետև հոր հետ, իրենց փոխկապակցված և մտերիմ անձանց ներգրավելու միջոցով, օրինականացրել են հանցավոր ճանապարհով ստացված՝ Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի նախկին հյուրանոցին հարակից Նալբանդյան 1/46 և Նալբանդյան 1/48 հասցեներում գտնվող՝ որպես զբոսայգի հանդիսացող առանձնապես խոշոր չափի՝ 12.263.520 ՀՀ դրամ արժողությամբ անշարժ գույքերը:

Քննիչ Ա. Մուրադյան:

14. Իջևանի քաղաքապետի պաշտոնը զբաղեցրած անձը, ՀՀ Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Ուսանողական փողոցի 21 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից ավել օգտագործվող, հիշյալ անշարժ գույքին կից գտնվող, 1385.0 քմ մակերեսով հողամասի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ ճանաչել է հիշյալ քաղաքացու սեփականության իրավունքը, արդյունքում՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ին քաղաքացու և Իջևան համայնքի ղեկավարի միջև կնքվել է հիշյալ անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիրը, որի հիման վրա 2013 թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից քաղաքացու անվամբ կատարվել է այդ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում:

Այսինքն՝ պաշտոնատար անձը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, չարաշահել է պաշտոնեական լիազորությունները, ինչի արդյունքում անհատույց տրամադրման և ուղղակի վաճառքի միջոցով օտարման ոչ ենթակա, փոխարենը՝ անհրաժեշտության դեպքում աճուրդի միջոցով օտարման ենթակա, տվյալ ժամանակահատվածում 1.720.170 ՀՀ դրամ կադաստրային արժեքով անշարժ գույքը ՀՀ հողային օրենսգրքի 64-67-րդ հոդվածների պահանջների խախտմամբ, ուղղակի վաճառքով օտարել է էականորեն ցածր՝ կադաստրային արժեքից շուրջ 3 անգամ պակաս գնով:

Քննիչ Ն. Պողոսյան:

15. 2018 թվականի հոկտեմբերի 21-ից 2025 թվականի մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոց 971/8 հասցեում գտնվող, 0.9 հա մակերեսով, սպորտային և զվարճանքի կենտրոնի կառուցման համար ժամանակավոր կառույցներ տեղադրելու նպատակով առանձնացված համայնքապատկան հողամասն իրենն ու ընտանիքինը դարձնելու դիտավորությամբ, որոշել է ձևական աճուրդի միջոցով օտարել այն: Դրանից հետո համայնքի ղեկավարի ամուսնու հոր հրահանգով և նրա ֆինանսավորմամբ, վերջինիս հետ փոխկապակցված անձը ձևականորեն մասնակցել և 2022 թվականի օգոստոսի 8-ին կայացած աճուրդում հաղթող է ճանաչվել որպես միակ մասնակից:

Արդյունքում՝ առանձնապես խոշոր չափերի՝ 189.200.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող գույքը ձևական առուվաճառքի պայմանագրով ավելի քան երեքուկես անգամ պակաս գնով՝ 51.975.000 ՀՀ դրամով, օտարվել է վերը նշված անձին՝ փաստացի դառնալով համայնքի ղեկավարի ու նրա ընտանիքի անդամների սեփականությունը:

Դրանից հետո, կրկին ամուսնու հոր հրահանգով և համայնքի ղեկավարի իմացությամբ, 2022 թվականի հոկտեմբերի 21-ին վերջիններիս հետ փոխկապակցված նույն անձը դիմում է ներկայացրել Վաղարշապատի համայնքապետարան՝ խնդրելով ընդլայնման նպատակով օտարել սեփականության իրավունքով իբրև իրեն պատկանող 0.9 հա հողամասին կից գտնվող համայնքային նշանակության հողամասը, որից հետո համայնքի ղեկավարը, խախտելով օրենքի և կառավարության համապատասխան որոշումների պահանջները, աճուրդի միջոցով վաճառքի ենթակա, 54.200.000 ՀՀ դրամ շուկայական արժեք ունեցող համայնքապատկան գույքն ուղղակի վաճառքով, առանց ավագանու որոշման, շուրջ տասն անգամ պակաս գնով՝ 5.509.350 ՀՀ դրամով օտարել է նույն անձին:

Այնուհետև, հանցավոր ճանապարհով ձեռք բերված 0.9 հա և 0.1908 հա մակերեսով հողամասերի ծագման աղբյուրն ու պատկանելությունը թաքցնելու նպատակով, համայնքի ղեկավարի որոշմամբ դրանք միավորվել և որպես մեկ միավոր անշարժ գույք գրանցվել են վերը նշված անձի անվամբ: Դրանից հետո նշված գույքը համայնքի ղեկավարի ամուսնու օժանդակությամբ ձևական առուվաճառքի պայմանագրերով վաճառվել է նրանց հետ փոխկապակցված այլ անձանց, իսկ 2023 թվականի հունիսի 14-ին կնքված ևս մեկ ձևական առուվաճառքի պայմանագրով 63.500.000 ՀՀ դրամով վաճառել է համայնքի ղեկավարի ամուսնու մորը, ով այն ներդրել է իր կողմից հիմնադրված ընկերությունում:

Այնուհետև նրա դիմումի հիման վրա, համայնքի ղեկավարի որոշմամբ նշված գույքի մի մասի հողամասի գործառնական նշանակությունը հասարակականից փոփոխվել է բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, որից հետո համայնքապետի մեկ այլ որոշմամբ այն բաժանվել է տարբեր հասցեների և տրամադրվել բնակելի տների կառուցապատման թույլտվություն:

Քննիչ Ա. Խլղաթյան:

16. Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, նույն համայնքի գլխավոր ճարտարապետի պաշտոնը զբաղեցրած անձի հետ կաշառք տվողի օգտին հովանավորչության, թողտվության և այլ ապօրինի գործողության համար պահանջել է խոշոր չափերով՝ 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամ կաշառք գումար, ինչպես նաև մի խումբ պաշտոնատար անձանց հետ նախնական համաձայնությամբ կատարել է պաշտոնեական կեղծիք:

Քննիչ Ա. Սարգսյան:

17. 1999 թվականից մինչև 2011 թվականը ընկած ժամանակահատվածում Իջևան համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, Իջևան համայնքի Անկախության 13/41 հասցեում գտնվող 0.0905 հա մակերեսով 11-001-0124-0008 կադաստրային ծածկագրով հողամասն իրենը դարձնելու շահադիտական դրդումներից ելնելով, կազմակերպել է ձևական աճուրդ և միջնորդավորված եղանակով, այն է՝ իր անմիջական ենթակայությամբ գործող նույն համայնքապետարանի աշխատակցի միջոցով մասնակցել է 2006 թվականի փետրվարի 16-ով թվագրված ձևական աճուրդին և ճանաչվել ընտրված մասնակից, որի հիման վրա վերը նշված հողամասը 1.991.800 ՀՀ դրամով վաճառվել է հիշյալ աշխատակցին, որպիսի հանգամանքի մասին վերջինս տեղեկացված չի եղել: Արդյունքում՝ պաշտոնատար անձը փաստացի դարձել է մեկ այլ անձի անվամբ ձեռք բերված և գրանցված վերոգրյալ հողատարածքի սեփականատեր:

Դրանից հետո նա, օգտագործելով իր նախկին ենթակա հանդիսացող անձի նկատմամբ ունեցած ծառայողական լիազորություններից բխող ազդեցությունը, հանցավոր ճանապարհով ստացված գույքի ձեռքբերումը օրինականացնելու, գույքի իրական պատկանելությունը թաքցնելու և հանցավոր ծագման աղբյուրը խեղաթյուրելու, հանցավոր հետքերը վերացնելու նպատակով ցուցում է տվել հիշյալ անձին՝ վերջինիս անվամբ գրանցված սեփականության իրավունքը փոխանցել իր հետ փոխկապակցված անձին՝ կնոջ հորեղբորը: Նման պայմաններում, հիշյալ անձը 2011 թվականի նոյեմբերի 25-ին Դիլիջանի նոտարական տարածքում անշարժ գույքի առուվաճառքի ձևական պայմանագիր է կնքել պաշտոնյայի հետ փոխկապակցված անձի հետ:

Քննիչ Ն. Պողոսյան:

18. 2002 թվականից 2019 թվականն ընկած ժամանակահատվածում Հրազդան համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, նույն համայնքապետարանի բաժնի պետի հետ համատեղ, խմբի կազմում, այլ անձանց օժանդակությամբ չարաշահել են պաշտոնեական լիազորությունները, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև կատարել են պաշտոնեական կեղծիք, մասնավորապես՝ 2008 թվականի հուլիսի 7-ին, համայնքի ավագանու թույլտվության բացակայության պայմաններում, կազմակերպել են Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված անտառային հող հանդիսացող՝ օտարման ոչ ենթակա 11,0 հա մակերեսով հողամասի աճուրդով վաճառքը:

Միաժամանակ, աճուրդին երկրորդ մասնակցի բացակայության պայմաններում, կեղծ տեղեկություններ են ներառել պաշտոնական փաստաթղթերում և կազմել հողամասն աճուրդով օտարելու վերաբերյալ պաշտոնական կեղծ փաստաթղթեր՝ հողամասը համայնքի սեփականությունից դուրս բերելու վերաբերյալ :

Քննիչ Վ. Մարտիրոսյան:

19. 2015 թվականից 2021 թվականն ընկած ժամանակահատվածում Աբովյան համայնքի նախկին ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, տեղյակ լինելով «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշմամբ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի գլխավոր հատակագծի հաստատման ու դրանով նախատեսված զբոսայգիների, պուրակների կամ այլ տարածքների՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու մասին, այլ անձանց օժանդակությամբ, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ և Աբովյան համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ օտարման ոչ ենթակա ընդհանուր 21 միավոր հողատարածքներն ուղղակի վաճառքի, կեղծ աճուրդների կամ փոխանակման եղանակով օտարել է տարբեր անձանց: Պաշտոնատար անձը նախաքննության ընթացքում վերականգնել է առերևույթ հանցագործությամբ պատճառված վնասից 49.178.000 ՀՀ դրամը:

Բացի այդ, 2015 թվականից 2021 թվականն ընկած ժամանակահատվածում Աբովյան համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, «Աբովյանի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին հատկացված 2947,2քմ մակերեսով հողատարածքից իր՝ 2017 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1187 որոշմամբ առանձնացրել է 1200.6քմ մակերեսով հողամաս, որից հետո, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները՝ առանց աճուրդին վերաբերելի պայմանների պահպանման, աճուրդի արձանագրողի հետ, 2017 թվականի դեկտեմբերի 23-ին իրականացրել է ձևական աճուրդ՝ առանձնացված 1200.6քմ մակերեսով հողամասը, ինչպես նաև դրան կից գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 350 քմ մակերեսով հողամասը կեղծ աճուրդով վաճառելով աներորդու կնոջը: Դրանից հետո, կրկին առանց աճուրդին վերաբերելի պայմանների պահպանման, 2018 թվականի հունիսի 18-ին կազմակերպած ձևական աճուրդի միջոցով իր՝ 2018 թվականի մայիսի 4-ի թիվ 420 որոշմամբ «Աբովյան քաղաքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին հատկացված հողամասից առանձնացված 1080.7քմ մակերեսով հողամասը, ինչպես նաև «Աբովյանի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին հատկացված հողամասից 2018 թվականի մայիսի 4-ի թիվ 421 որոշմամբ առանձնացված 158.1քմ մակերեսով հողամասը վաճառել է վերոհիշյալ անձին: Այնուհետև հիշյալ անձը, իսկ հետագայում նաև՝ այլ անձի հետ գույքերի օտարման վերաբերյալ պայմանագրեր կնքելով և գույքերի նկատմամբ սեփականության իրավունքը վերջինիս փոխանցելով՝ համայնքի ղեկավարը թաքցրել և խեղաթյուրել է առանձնապես խոշոր չափերով՝ 83.450.000 ՀՀ դրամ ընդհանուր շուկայական արժեքով հիշյալ անշարժ գույքերի

նկատմամբ իր իրավունքները, դրանց իրական պատկանելությունը և հանցավոր ծագումը:

Բացի այդ, թաքցնելով գույքի նկատմամբ իրավունքներն ու պատկանելությունը և այդ գույքի նկատմամբ իրական շահառու լինելու հանգամանքը, համայնքի ղեկավարը փաստացի իրեն պատկանող և աներորդու կնոջ անվամբ սեփականության իրավունքով գրանցված հողամասերը ձևական բնույթ կրող առուվաճառքի պայմանագրերով օտարել է մեկ այլ անձի, որից հետո խոչընդոտները վերացնելու եղանակով դրսևորված իր վարորդի օժանդակությամբ իրականացրել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում, որպիսի հողամասի վրա համայնքի ղեկավարի ֆինանսական միջոցներով կառուցվել և պետական գրանցում է ստացել նրա օրինական եկամուտներն էականորեն գերազանցող և դրանցով չհիմնավորվող՝ 391.550.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով բնակելի տուն և օժանդակ շինություններ, որոնց կառուցման համար կատարված շինարարական աշխատանքների ծախսը կազմել է 293.200.000 ՀՀ դրամ:

Քննիչ Վ. Մարտիրոսյան:

Կոռուպցիոն հոդվածներով նախաձեռնված վարույթներից 2025 թվականի ընթացքում կարճվել է 565 քրեական վարույթ ***(այդ թվում՝ կրկնակի)***, որից 433-ը կարճվել է ռեաբիլիտացնող, իսկ 132-ը՝ ոչ ռեաբիլիտացնող: Ոչ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ են կայացվել 547 անձի վերաբերյալ:

Կարճված քրեական վարույթները *(այդ թվում կոռուպցիոն, առանց կրկնակիի)* ըստ հանցագործությունների բնույթի եղել են.

- **Մարդու դեմ ուղղված հանցագործություններ՝** 1 քրեական վարույթ,
- **Ընտրությունների հետ կապված հանցագործություններ՝** 4 քրեական վարույթ,
- **Հափշտակություններ՝** 147 քրեական վարույթ,
- **Տնտեսական հանցագործություններ՝** 5 քրեական վարույթ,
- **ՃԵԿ-ի կանոններ խախտումներ՝** 5 քրեական վարույթ,
- **Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ՝** 2 քրեական վարույթ,
- **Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններ՝** 313 քրեական վարույթ,
- **Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ՝** 1 քրեական վարույթ,
- **Այլ հանցագործություններ՝** 96 քրեական վարույթ:

Դատավարական հարկադրանքի միջոցները

Հաշվետու ժամանակահատվածում Կոմիտեում քննվող քրեական վարույթներով ձերբակալվել է 590 անձ, որոնցից 577-ը ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար, իսկ 13-ը՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում: 351-ն ազատ է արձակվել անազատության մեջ պահելու անհրաժեշտության վերացման հիմքով:

Քննված քրեական վարույթներով մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու 243 միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից բավարարվել է 102-ը, որից 9-ը՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ, մասնակի բավարարվել է 98-ը: Միջնորդությունները մերժելու մասին 43 որոշումներից 2-ի դեմ դատախազի կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է:

Տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառվել է 99, վարչական հսկողությունը՝ 60, պաշտոնավարման կասեցումը՝ 60, իսկ գրավը՝ 141 մեղադրյալների նկատմամբ: Ընդ որում, Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնությամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ներկայացվել է 4 միջնորդություն, իսկ վարչական հսկողություն խափանման միջոց կիրառելու վերաբերյալ՝ 3 միջնորդություն:

Կոմիտեում քննված քրեական վարույթներով մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում ընտրելիս կարևորվել է դրա բացառիկ բնույթը, և դատարանին կալանավորման միջնորդություն ներկայացվել է բացառապես կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու օրենսդրական հիմքերի առկայության դեպքում՝ հաշվի առնելով նաև կոնկրետ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները

Նախաքննությունն ավարտված (դատարան ուղարկված և կարճված) 839 քրեական վարույթից *(առանց կրկնակիի)* 236-ն ավարտվել է մինչև 2 ամիս ժամկետում, 173-ը՝ 2-4 ամիս ժամկետում, 89-ը՝ 4-6 ամիս ժամկետում, 174-ը՝ 6-12 ամիս ժամկետում, 167-ը՝ մեկ տարուց ավելի ժամկետում:

Ավարտված քրեական վարույթներով կալանավորված է եղել 106 մեղադրյալ, որից 69-ը կալանքի տակ պահվել է մինչև 2 ամիս, 33-ը՝ 2-4 ամիս, 4-ը՝ 4-6 ամիս:

Հանցագործությամբ պատճառված վնասի մասին

2025 թվականի ընթացքում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պատճառված գույքային վնասի չափը կազմել է 8.451.208.373 ՀՀ դրամ, որից պետությանը՝ 4.585.606.069 ՀՀ դրամ, համայնքին՝ 3.731.227.911 ՀՀ

դրամ, իրավաբանական անձանց՝ 117.549.793 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց՝ 16.824.600 ՀՀ դրամ: Հիշյալ քրեական վարույթներով պատճառված ընդհանուր գույքային վնասից նախաքննության ընթացքում փաստացի դրամական տեսքով հաշվետու ժամանակաշրջանում վերականգնվել է 1.642.887.983 ՀՀ դրամ, որից պետությանը՝ 1.430.562.115 ՀՀ դրամ, համայնքին՝ 97.267.686 ՀՀ դրամ, իրավաբանական անձանց՝ 111.997.582 ՀՀ դրամ, ֆիզիկական անձանց՝ 3.060.600 ՀՀ դրամ:

Անավարտ մնացած քրեական վարույթներով հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է 726.430.094 ՀՀ դրամ:

Բացի այդ, որպես վնասի վերականգնման ապահովման ռեալ միջոց՝ ավարտված քրեական վարույթներով արգելանք է դրվել ընդհանուր 674.975.798 ՀՀ դրամ արժողությամբ անշարժ և շարժական գույքերի վրա:

Միջնորդագրեր

Կարևորելով կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելումը՝ հաշվետու ժամանակահատվածում Կոմիտեի քննիչները հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար համապատասխան պաշտոնատար անձանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի կարգով քրեական վարույթներով ներկայացրել են 122 միջնորդագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված միջնորդագրերը հիմնականում քննարկվել են պատշաճ կարգով, և օրենքով սահմանված մեկամսյա ժամկետներում քննարկման արդյունքների մասին հայտնվել է միջնորդագրի հեղինակին:

Հսկողություն և վերահսկողություն

Մեղադրական եզրակացությունները, քրեական վարույթը կարճելու և քննիչի մյուս դատավարական որոշումները, որպես կանոն, հաստատվել են դատավարական հսկողություն իրականացնող դատախազների կողմից: Սակայն տեղ են գտել նաև առանձին դեպքեր, երբ դատախազը վերացրել է քննիչի որոշումը կամ չի հաստատել մեղադրական եզրակացությունը:

Այսպես՝ հաշվետու ժամանակաշրջանում դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից վերացվել կամ չի հաստատվել վարույթը կարճելու մասին 54 որոշում: Արձանագրվել է նաև հսկող դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը չհաստատելու պատճառով քրեական վարույթը վերադարձնելու 8 դեպք:

Դատախազի կողմից վերացվել է քրեական վարույթից մաս անջատելու մասին 3 որոշում:

Հարկ է նշել, որ դատախազի կողմից վարույթը կարճելու մասին վերացված կամ չհաստատված 54 որոշումներից 37-ի դեպքում հետագա նախաքննությամբ կրկին հիմնավորվել է քննիչների սկզբնական դիրքորոշումը, և քրեական վարույթների ընթացքը լուծվել է նույն կերպ, ինչպիսին եղել է սկզբում: Մնացած վարույթների նախաքննությունը դեռ շարունակվում է, և դրանց արդյունքները հնարավոր կլինի վերլուծել հետագայում:

Դատախազի կողմից չհաստատված 8 մեղադրական եզրակացություններից 5-ի դեպքում հետագա նախաքննությամբ կրկին քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու և իրավասու դատարան հանձնելու նպատակով: Մեկ դեպքում քրեական վարույթը կարճվել է, երկու դեպքում միացվել է այլ քրեական վարույթի:

Դատախազների կողմից քննիչների դատավարական որոշումների վերացման յուրաքանչյուր դեպքի պատճառները քննարկվել են Կոմիտեում, և եթե պարզվել է, որ այդ վերացումները պայմանավորված են եղել քննիչի բացթողումներով, աշխատանքում թերություններն ու բացթողումները բացառելու ուղղությամբ ձեռնարկվել են գործուն միջոցներ:

Դիմում-հաղորդումներ

Հաշվետու ժամանակահատվածում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 5655 դիմում-հաղորդման, որից 882-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, 971-ով քրեական վարույթ չի նախաձեռնվել, 736-ը ուղարկվել է Կոմիտեի օպերատիվ հետախուզական վարչություն ստուգումներ իրականացնելու նպատակով, 47-ը սահմանված կարգով քննարկվել և դիմումատուին պատասխան է տրվել, 23-ն ուղարկվել է այլ մարմիններ քննարկման, 1220-ը կցվել է քրեական վարույթներին, 30-ը բավարարվել է, 7-ը մերժվել է, մնացած դիմումները ևս ստացել են իրավական ակտերով սահմանված ընթացք:

Հարկ է նկատել, որ 2025 թվականին ստացված դիմում-հաղորդումների թիվը նախորդ՝ 2024 թվականի համեմատությամբ աճել է 374-ով (2024 թվականին՝ 5281), ինչը ևս վկայում է քաղաքացիների շրջանում Կոմիտեի նկատմամբ վստահության աճի և միաժամանակ աշխատանքի ծանրաբեռնվածության ավելացման մասին:

Քննիչների ծանրաբեռնվածությունը

Հաշվետու ժամանակահատվածում Կոմիտեում միջինը փաստացի աշխատել է 59 քննիչ: Վարույթների քանակի աննախադեպ աճով պայմանավորված, ինչպես նաև գերծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով նախաքննություն են իրականացրել նաև Կոմիտեի վեց վարչությունների պետերի տեղակալները, սակայն այդ պայմաններում ևս միջին ծանրաբեռնվածությունը չի նվազել և այն կազմել է տարեկան միջինը 44 վարույթ մեկ քննիչի հաշվարկով (2585 քրեական վարույթ/59 քննիչ):

Քննիչների իրական ծանրաբեռնվածությունն առավել ճիշտ պատկերացնելու համար թվական տվյալների հետ զուգահեռ հարկ է նաև նկատի ունենալ, որ Կոմիտեի վարույթում քննվել են այնպիսի քրեական վարույթներ, որոնցով մեկ վարույթում կատարված նախաքննության ծավալներն առավել ընդգրկուն են եղել, քան կարող էին լինել տասնյակ քրեական վարույթների ծավալները:

Քննիչների ծանրաբեռնվածությունը ներկայացնելիս հարկ է նշել նաև, որ հաշվետու ժամանակահատվածում նրանք մասնակցել են իրենց կայացրած որոշումների դեմ բերված բողոքների քննության դատական նիստերին հակակոռուպցիոն և վերաքննիչ հակակոռուպցիոն դատարաններում:

2025 թվականի ընթացքում Կոմիտեում կազմվել է 182 քննչական խումբ:

Ներքին անվտանգության և վերահսկողության վարչության կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում հարուցված ծառայողական քննությունների շրջանակներում Ներքին անվտանգության և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է 5 նախնական ուսումնասիրություն, որի արդյունքում Կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներով հաստատվել է կարգապահական խախտման փաստերի առկայությունը և դրանցում 6 *(3-ը՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող, 3-ը՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք)* ծառայողների մեղավորությունը, որոնց նկատմամբ Կոմիտեի նախագահի հրամաններով նշանակվել են տարբեր կարգապահական տույժեր:

Մեթոդաբանական աջակցություն է ցուցաբերվել 40 քրեական վարույթով, այդ թվում՝

- 10 տարի քննվող՝ 2 քրեական վարույթով,
- 7 տարի քննվող՝ 4 քրեական վարույթով,
- 6 տարի քննվող՝ 3 քրեական վարույթով,
- 5 տարի քննվող՝ 2 քրեական վարույթով,
- 3 տարի քննվող՝ 6 քրեական վարույթով,
- 2 տարի քննվող՝ 7 քրեական վարույթով,
- 1 տարի քննվող՝ 13 քրեական վարույթով:
- 2025 թվականին նախաձեռնված՝ 3 քրեական վարույթներով:

Նշված քրեական վարույթներով 2-ը՝ 5 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 4-ը կարճվել է, 1-ն ուղարկվել է ըստ քննչական ենթակայության, մնացածը գտնվում են նախաքննության փուլում:

Վարչության կողմից ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ընթացք է տրվել քաղաքացիների 43 դիմում–բողոքների, ուսումնասիրվել է 108 օպերատիվ հաշվառման գործ: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տարբեր հրամաններում փոփոխություններ կատարելու մասով ներկայացվել է 5 առաջարկություն, ինչպես նաև

մշակվել են օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների աշխատանքի գնահատման չափորոշիչներ:

Մշակված չափորոշիչների հիման վրա ընդունվել է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների ծառայողների աշխատանքի գնահատման կարգ, որը հնարավորություն կտա աշխատանքը գնահատել ոչ թե սուբյեկտիվ մոտեցումների, այլ իրական արդյունքների, կատարողականի և մասնագիտական որակի հիման վրա: Այն կնպաստի արդարության և հավասարության սկզբունքների ամրապնդմանը, ինչպես նաև ծառայողների մոտ կխթանի պատասխանատվության զգացումը և կբարձրացնի նրանց մոտիվացիան:

Օպերատիվ-հետախուզական վարչության կատարած աշխատանքների վերաբերյալ

Հիշյալ ժամանակահատվածում վարչության ծառայողների կողմից կազմվել է թվով 2258 օպերատիվ-հաշվառման գործ, որոնց շրջանակներում իրականացվել են շուրջ 4418 օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, քննարկվել են դիմումներ, նախաքննության մարմիններ (ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե և ՀՀ քննչական կոմիտե) ներկայացվել է հանցագործության մասին 124 հաղորդում:

Որպես հետաքննության մարմին՝ օպերատիվ-հետախուզական վարչության կողմից քննիչի հանձնարարությամբ նախաքննության է ներկայացվել 979 անձ, կատարվել են 256 գաղտնի քննչական գործողություններ, իրականացվել է 540 քննչական գործողությունների օժանդակում, 919 անձի ձերբակալում: Ստացվել և կատարվել է 1001 քննչական հանձնարարություն:

Կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության գործունեության արդյունավետության ցուցանիշներն արտացոլված են սույն հաղորդման մինչդատական վարույթին վերաբերող բաժիններում՝ նկատի ունենալով, որ ՕՀ վարչության կողմից բացահայտված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործությունների դեպքերով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնցով քննությունը կատարել են Կոմիտեի քննչական վարչությունների քննիչները: Բացի այդ, Կոմիտեում քննվող քրեական բոլոր վարույթներով ՕՀ վարչության ծառայողներն իրականացրել են պատշաճ հետաքննություն:

Այլ գործառույթներ

2025 թվականի ընթացքում ծավալուն աշխատանքներ են իրականացվել Կոմիտեի վերջնական ձևավորման ուղղությամբ, որոնց մի մասը շարունակվելու է նաև 2026 թվականի ընթացքում:

Նկատի ունենալով, որ Կոմիտեի կայացման, գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական երաշխիքն արհեստավարժ կադրերն են և նրանց

մասնագիտական պատրաստվածության անընդհատ բարձրացումը, 2025 թվականի ընթացքում այս ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել:

2025 թվականի ընթացքում Կոմիտեի ինքնավար և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով հայտարարված 15 մրցույթներից անցկացվել է 12-ը, որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել են 110 թեկնածուներ: Մրցույթների անցկացմանը մասնակցություն են ունեցել դիտորդներ և հոգեբան:

Մրցույթներին մասնակցած թեկնածուներից հաղթող են ճանաչվել 35-ը (20-ը ինքնավար պաշտոնների համար դիմած, իսկ 15-ը՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների համար դիմած), որոնք էլ նշանակվել են համապատասխան պաշտոնների:

2025 թվականի ընթացքում մրցույթներով հաղթող ճանաչվածներից 4-ը վերապատրաստում են անցել ՀՀ ոստիկանության ակադեմիայում, իսկ 1 թեկնածուի մասնագիտական պատրաստումը ՀՀ արդարադատության ակադեմիայում ընթացքի մեջ է:

Կոմիտեի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով կազմակերպվել ու անցկացվել է 9 մրցույթ: Մրցույթներին մասնակցելու համար դիմել է 76 քաղաքացի, հաղթող են ճանաչվել 5 մասնակիցներ և նշանակվել համապատասխան պաշտոններում:

Կոմիտեի 3 քաղաքացիական ծառայողների համար կազմակերպվել է կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներ՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից:

Կոմիտեի 2025 թվականի կարիքների բավարարման և անխափան աշխատանքային գործընթացն ապահովելու նպատակով կազմակերպվել են ստորև ներկայացված գնման ընթացակարգերը՝

1. Էլեկտրոնային աճուրդ (ԷԱ).

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կազմակերպվել է 158 չափաբաժիններից բաղկացած 14 «էլեկտրոնային աճուրդ» (ԷԱ) գնման ընթացակարգ: «էլեկտրոնային աճուրդ» (ԷԱ) գնման ընթացակարգերի արդյունում կնքված պայմանագրերի թվաքանակը՝ 48: Էլեկտրոնային աճուրդների ամփոփման արդյունքում կնքված գնման պայմանագրերի ընդհանուր գումարը՝ 128.992.970 ՀՀ դրամ, որից՝ տնտեսագիտական դասակարգման «Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261 հոդվածով՝ 29.326.487 ՀՀ դրամ, «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267 հոդվածով՝ 2.806.902 ՀՀ դրամ, «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածով՝ 5.450.500 ՀՀ դրամ, «Վարչական սարքավորումներ» 5122 հոդվածով՝ 2.685.440 ՀՀ դրամ, «Տրանսպորտային նյութեր» 4264 հոդվածով՝ 83.033.640 ՀՀ դրամ, իսկ տնտեսագիտական դասակարգման «Կապի ծառայություններ» 4214 հոդվածով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում մատուցված ծառայությունների գումարը՝ 5.690.000 ՀՀ դրամ: Սույն ընթացակարգի արդյունքում ձեռք բերված հիմնական միջոցների թիվը եղել է 25:

2. Գնանշման հարցում (ԳՀ).

Գնանշման հարցում գնման տվյա ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, ինչպես նաև 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.

Կազմակերպվել է 6 չափաբաժիններից բաղկացած թվով 5 «գնանշման հարցում» գնման ընթացակարգ: Կնքված պայմանագրերի թվաքանակը կազմել է՝ 12 հատ: Ընթացակարգերի ամփոփման արդյունքում կնքված գնման պայմանագրերի ընդհանուր գումարը կազմել է 18.085.040 ՀՀ դրամ, որից՝ տնտեսագիտական դասակարգման «Ապահովագրական ծախսեր» 4215 հոդվածով կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերի գումարը՝ 399.000 ՀՀ դրամ, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածով՝ ծառայությունների մատուցման կնքված պայմանագրերի գումարը՝ 24.000 ՀՀ դրամ, «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» 4252 հոդվածով՝ 5.089.960 ՀՀ դրամ, իսկ «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածով՝ 3.512.200 ՀՀ դրամ:

3.ՄԱ (Մեկ Անձ) գնման ընթացակարգով ձեռք բերված ապրանքներ և ծառայություններ.

ՄԱ (Մեկ Անձ) գնման ընթացակարգով ձեռք են բերվել հետևյալ ծառայությունները՝ Տնտեսագիտական դասակարգման «Էներգետիկ ծառայություններ» 4212 հոդվածով մուտքագրված և հաշվառված են թվով 8 շարունակական պայմանագրեր, որոնց գումարը կազմել է 37.571.300 ՀՀ դրամ.

«Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածով մուտքագրված և հաշվառված են թվով 4 շարունակական պայմանագրեր, որոնց գումարը կազմել է 1.241.500 ՀՀ դրամ.

«Կապի ծառայություններ» 4214 հոդվածով կնքված, մուտքագրված և հաշվառված են 8 պայմանագրեր, որոնց գումարը կազմել է 6.284.800 ՀՀ դրամ.

«Կառավարչական ծառայություններ» 4235 հոդվածով կնքված, մուտքագրված և հաշվառված է 1 պայմանագիր, որի գումարը կազմել է 48.000 ՀՀ դրամ:

«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածով մատուցված ծառայությունների գումարը կազմել է 3.187.736 ՀՀ դրամ, որի շրջանակներում կնքվել են գնման 6 պայմանագրեր:

«Համակարգչային ծառայություններ» 4232 հոդվածով մատուցված ծառայությունների գումարը՝ 8.583.520 ՀՀ դրամ, որի շրջանակներում կնքվել է գնման 12 պայմանագիր:

«Տեղեկատվական ծառայություններ» 4234 հոդվածով մատուցված ծառայությունների և ապրանքների պայմանագրային արժեքը կազմում է 2.656.500 ՀՀ դրամ, որի շրջանակներում կնքվել է գնման 10 պայմանագիր:

«Վարչական սարքավորումներ» 5122 հոդվածով ձեռք են բերվել 15 հիմնական միջոց հանդիսացող գույք և տեխնիկա, որոնց պայմանագրային արժեքը կազմում է 2.918.800 ՀՀ դրամ, իսկ «Տրանսպորտային սարքավորումներ» 5121 հոդվածով կնքվել է 1 գնման պայմանագիր, որի արդյունքում ձեռք է բերվել 1 հիմնական միջոց:

«Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261 և «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4264 հոդվածներով ձեռք բերված ապրանքների գումարը կազմել է 592.342 ՀՀ

դրամ, որի վերաբերյալ հաշվառվել և մուտքագրվել է գնումների համակարգում 24 հաշիվ ապրանքագիր:

«Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» 4252, «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածի, «Վարչական ծառայություններ» 4231 հոդվածիների շրջանակներում կնքվել են 5 պայմանագրեր, որոնց գումարը կազմել է 3.361.700 ՀՀ դրամ:

Ընդհանուր հաշվառվել է ՄԱ գնման ընթացակարգով կազմակերպված 102 պայմանագիր և հաշիվ ապրանքագիր:

ԳՉԾ (Գնում Չհանդիսացող Ծախսեր).

2025 թվականի ընթացքում օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից, ինչպես նաև բյուջեների կատարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարչական ակտի հիման վրա մատուցված ծառայությունների թվաքանակը կազմել է 39, որի նպատակով հաշվառված և մուտքագրված պայմանագրերի գումարը կազմել է 45.365.514 ՀՀ դրամ: Կոմիտեն, որպես երկրում կոռուպցիայի դեմ պայքարի քննչական մարմին, կազմավորման օրվանից մշտական կապի մեջ է գտնվել միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում վերջիններիս ունեցած հաջողված փորձն ուսումնասիրելու և դրա լավագույն տարրերը որդեգրելու նպատակով: Կոմիտեն շարունակում է արդյունավետ կերպով համագործակցել ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, Իրավապահ համագործակցության գերմանական հիմնադրամի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Իտալիայի Ֆինանսական գվարդիայի և գործընկեր այլ կառույցների հետ:

2025 թվականի ընթացքում Կոմիտեի ներկայացուցիչները մասնակցել են 85 աշխատաժողովների, խորհրդակցությունների, քննարկումների և սեմինարների, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում իրականացվող աշխատանքներին, միջազգային գործընկերների կողմից իրականացվող՝ Հայաստանի հակակոռուպցիոն բարեփոխումների աջակցության ծրագրերին, կոռուպցիայի դեմ պայքարին, Հայաստանում արդարադատության համակարգի բարեփոխումներին ու հզորացմանը:

Վերոհիշյալ ժամանակահատվածում Կոմիտեի նախագահը, նախագահի տեղակալները և համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները 13 հանդիպում են ունեցել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, օտարերկրյա կազմակերպությունների, համանման գործառույթներ իրականացնող մարմինների, ինչպես նաև միջազգային այլ կառույցների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում կարևորվել է հակակոռուպցիոն ոլորտում ակտիվ շարունակական

համագործակցությունը և համատեղ աշխատանքների շրջանակներում գործնական քայլերի մեկնարկն ու հետագա անելիքների պլանավորումը: Առաջնահերթ աշխատանքների համատեքստում շարունակվել է դիտարկվել Կոմիտեի արդյունավետ գործունեության համար պահանջվող տեխնիկական հագեցվածության հարցերը, ժամանակակից տեխնիկայի ձեռքբերման և գործարկման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրման հնարավորությունը, ինչպես նաև քննիչների և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների կարողությունների ու հմտությունների զարգացման նպատակով վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Կոմիտեի ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացման և քննության արդյունավետության ապահովման գործում մեծ է եղել օտարերկրյա իրավապահ մարմինների հետ համագործակցության դերն ու նշանակությունը՝ ինչպես լավագույն փորձի փոխառման, այնպես էլ բուն մինչդատական վարույթի ընթացքում իրավական փոխօգնության առումով, հատկապես հաշվի առնելով, որ մի շարք կոռուպցիոն հանցագործություններ, ինչպիսիք են փողերի լվացումը, ապօրինի հարստացումը, հաճախ ունեն անդրազգային բնույթ և առանց օտարերկրյա պետությունների գործընկերների աջակցության որոշ դեպքերում անհնար է պատշաճ քննության իրականացումը:

Կոմիտեի կազմավորումից ի վեր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից («ԹՊԻՀ», «INL») շարունակական աշխատանքներ են տարվում կառույցի հետ գործընկերային հարաբերությունների խորացման և համագործակցության օրակարգի ընդլայնման նպատակով: Հիշյալ համագործակցության առանցքային ուղղություններից է Կոմիտեի ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստման դասընթացների անցկացումը: Այդ համատեքստում 2025 թվականի ընթացքում ՀՀ-ում ԱՄՆ դասպանատան ԹՊԻՀ-ի աջակցությամբ Կոմիտեի 3 քննիչ մանակցել է Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի իրավապահ ակադեմիայի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն շարքի դասընթացներին: 2025 թվականի հունվարին ԱՄՆ դասպանատան ԹՊԻՀ-ի կողմից կազմակերպվել է ապօրինի հարստացման վերաբերյալ դասընթաց, որին մասնակցել է Կոմիտեի 3 քննիչ:

2025 թվականի հունիսին ԵՄ ֆինանսավորմամբ Էքորիս կազմակերպության կողմից Կոմիտեի 9 քննիչի համար կազմակերպվել է փողերի լվացման հատկանիշներով հարուցված քրեական գործերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ դասընթաց-վերապատրաստում:

2025 թվականի օգոստոսին ԵՄ ֆինանսավորմամբ Էքորիս կազմակերպության կողմից Կոմիտեի 17 ծառայողի համար կազմակերպվել է գույքի և եկամուտների հայտարարագրերի հետ աշխատանքի վերաբերյալ դասընթաց-վերապատրաստում:

2025 թվականի հոկտեմբերին Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից Կոմիտեի 11 ծառայողի համար կազմակերպվել է Ֆինանսական հանցագործությունների

քննության և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների կիրառման վերաբերյալ դասընթաց-վերապատրաստում:

Նշված ժամանակահատվածում Կոմիտեի ներկայացուցիչները մասնակցել են Հունգարիայում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Ռումինիայում, Սինգապուրում և Ֆրանսիայում կազմակերպված դասընթացներին, որոնք վերաբերել են ֆինանսական քննություններին, փողերի լվացմանը և ակտիվների վերականգնմանը, միջազգային փողերի լվացմանը, ֆինանսական հանցագործությունների բացահայտմանը և կանխարգելմանը: 2025 թվականի հուլիսին Կոմիտեի նախագահի տեղակալը Փարիզում մասնակցել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հակակոռուպցիոն ցանցի լիագումար նիստին: 2025 թվականի նոյեմբերին Կոմիտեի ներկայացուցիչը Բուխարեստում մասնակցել է նաև ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի իրավապահ ցանցի 15-րդ հանդիպմանը:

2025 թվականի նոյեմբերին Կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ներկայացուցիչները մասնակցել են Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացած MILIPOL 2025 օպերատիվ տեխնիկայի ցուցահանդեսին: 2025 թվականի դեկտեմբերին Կոմիտեի նախագահը մասնակցել է Կատարում անցկացվող՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովի (UNCAC CoSP) 11-րդ նստաշրջանին: Նստաշրջանի ընթացքում Կոմիտեի նախագահն ունեցել է մի շարք հարդիպումներ, այդ թվում՝ Չինաստանի, Մոլդովայի և Ղազախստանի գարծընկերների հետ: Հանդիպումների ընթացքում երկկողմ կարևորվել է իրավապահ ոլորտում շարունակական և արդյունավետ համագործակցությունը:

2025 թվականի ընթացքում նախապատրաստական աշխատանքներ են տարվել Վրաստանի պետական անվտանգության ծառայության հետ փոխըմբռնման հուշագիր ստորագրելու ուղղությամբ:

2025 թվականի ընթացքում Կոմիտեի կողմից քննվող 10 քրեական վարույթների շրջանակում օտարերկրյա պետություններ է ուղարկվել իրավական փոխօգնության 14 հարցում: 2025 թվականի ընթացքում, այդ թվում նախորդ տարիներին ուղարկված միջազգային իրավական փոխօգնության հարցումներով, ստացվել է 5 պատասխան: Հիշյալ ժամանակահատվածում Կոմիտեի քննիչների կողմից նախորդ տարիներին օտարերկրյա պետություններից ստացված իրավական փոխօգնության 2 հարցում է կատարվել:

Արդյունքում՝ Կոմիտեի կողմից 2025 թվականի ընթացքում ամբողջությամբ իրականացվել են նախատեսված ծրագրերն ու միջոցառումները, ապահովվել է Կոմիտեի միջազգային քաղաքականության շարունակական և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև ստեղծվել են միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ կազմակերպչական և արարողակարգային պայմանները:

Կոմիտեի կողմից 2025 թվականի ընթացքում մշակվել է օրենսդրական 5 նախագիծ: Մասնավորապես՝ Կառավարության որոշումների 2 նախագիծ՝

1. 2025 թվականի հունվարի 24-ին Կոմիտեի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 550-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի համաձայն՝ համապատասխան մարմիններում թափուր պաշտոն առաջանալու դեպքում Կոմիտեում աշխատող կամ նախկինում ծառայած սուբյեկտային կազմի շրջանակից նշանակվելու դեպքում պաշտոնների համապատասխանեցում կլինի:

2. 2025 թվականի դեկտեմբերի 8-ին Կոմիտեի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի N 1377-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է Կառավարության որոշման հավելվածում կատարել լրացում՝ նախատեսելով Կոմիտեի ծառայողներին՝ իրենց բնակության վայրից 30 կմ և ավելի հեռավորությամբ ծառայության նշանակվելու կամ ծառայության գործուղվելու դեպքում բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության պարագայում ստանալու համապատասխան դրամական փոխհատուցում՝ բնակելի տարածության վարձակալության համար:

Օրենքների 3 նախագիծ՝

1. 2025 թվականի նոյեմբերի 12-ին Կոմիտեի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով նախատեսվում է, որ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կիրականացվեն նաև կաշառք տալու, կաշառք ստանալու հոդվածներով ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ՝ առերևույթ հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև կատարվող մյուս փոփոխությունների արդյունքում օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատարանի թույլվությամբ կիրականացվի նաև օպերատիվ հարցումը, եթե միջոցառման կատարմամբ ակնկալվում է ստանալ բաժանորդի նախկինում կատարված ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի մուտքային և ելքային զանգերը, բաժանորդի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցող հեռախոսահամարները, հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակը, հեռախոսազանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում՝ այն հեռախոսահամարը, որին փոխանցվել է հեռախոսազանգը, ինչպես նաև հեռախոսային հաղորդակցությունը սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների տեղակայումը:

2. 2025 թվականի դեկտեմբերի 18-ին Կոմիտեի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել ««Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է Կոմիտեի նախագահին հնարավորություն ընձեռել Կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց շնորհակալագրից, հուշանվերից և դրամական

պարգևատրումից բացի պարգևատրել նաև մեդալով կամ կրծքանշանով: Տվյալ փոփոխությունը պայմանավորված է Օրենքում կիրառվող եզրույթների միասնականությունն ապահովելու պայմանով, քանի որ ինքնին կիրառվող խրախուսանքի միջոցները նույնն են:

3. 2025 թվականի սեպտեմբերի 11-ին Կոմիտեի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որի ընդունմամբ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի՝ ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը վերտառությունը կրող 482-րդ հոդվածում ավելացնել երկրորդ մաս: Մասնավորապես՝ պատասխանատվություն նախատեսել նաև նույն արարքի համար, որն անզգուշությամբ հանգեցրել է նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունից տուժած անձի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի կամ անզգուշությամբ առաջացրել է առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք կամ հանգեցրել է ազատությունից զրկման կամ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Կարևորելով Կոմիտեի թափանցիկ գործելաոճն ու հաշվետվողականությունը վերջինիս գործունեության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման հարցում և այդ կերպ նաև կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման ու բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքը՝ 2025 թվականին շարունակվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքները կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման ուղղությամբ:

Մասնավորապես՝ լուսաբանվել են հանրության շրջանում հնչեղություն ստացած քրեական վարույթների ընթացքը, Կոմիտեի գործունեությանը վերաբերելի իրավական ակտերը, միջազգային համագործակցության շրջանակում վերջինիս ներկայացուցիչների հետ կազմակերպված հանդիպումները: Քննարկումներ ու հանդիպումներ են կազմակերպվել նաև ուսանողների, ավագ դպրոցների աշակերտների, ինչպես նաև լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Բացի այդ, նախորդ տարի գործարկվել է նաև պաշտոնական կայքի նոր՝ ավելի հարմարավետ և բարելավված տարբերակը, որի նպատակն է՝ Կոմիտեի կողմից հրապարակվող տեղեկատվությունը քաղաքացիների համար դարձնել առավել դասակարգված, մատչելի և հասանելի՝ այդ կերպ բարձրացնելով նաև կառույցի հաշվետվողականության ու թափանցիկության մակարդակը:

Հակակոռուպցիոն կոմիտեում գործարկվել է «Թեժ գիծ» ծառայություն, որը հնարավորություն է տալիս հասարակությանը ներգրավվել կոռուպցիայի դեմ պայքարում և լինել դրան մասնակից:

Թողարկվել են անիմացիոն տեսահոլովակներ, որոնք ազդարարում են կոռուպցիոն երևույթների բացասական լինելու, ինչպես նաև դրա դեմ պայքարի, Հակակոռուպցիոն

կոմիտե դիմելու անհրաժեշտության մասին, որը նախադեպը չունեցող գործելաոճ է և կրելու է շարունակական բնույթ:

Հաշվետու ժամանակահատվածում լրատվամիջոցների գրավոր հարցումներին տրվել է 45 պատասխան, իսկ քրեական վարույթների լուսաբանման կապակցությամբ համացանցում տարածվել են 170 հաղորդագրություններ երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

Ամփոփելով 2025 թվականի գործունեության արդյունքների վերաբերյալ հաղորդումը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ Կոմիտեն կատարել է հաշվետու ժամանակահատվածի համար իր առջև դրված խնդիրները՝ կազմակերպել և իրականացրել է օրենքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում, դրանց վերաբերյալ քրեական վարույթներով նախաքննություն, պայմաններ է ապահովել նոր ձևավորված իրավապահ մարմնի գործունեության համար, միջոցառումներ է ձեռնարկել գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ծառայողների գործունեության կազմակերպահիրավական, սոցիալական երաշխիքները ապահովելու, քննչական աշխատանքներում նախադեպային իրավունքի անմիջական կիրառումը, ինչպես նաև տեսություն-պրակտիկա ներդաշնակ կապը կատարելագործելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն կոմիտե